ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> հուլիսի 2026թ. N ՄՈ/413 -Ա

ք. Արմավիր

«ՔԱՐԱԿԵՐՏԻ N1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՇԽԵՆ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Աշխեն Մինասյանի 2026 թվականի հուլիսի 10-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Քարակերտի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աշխեն Մինասյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 15-ից օգոստոսի 4-ը ներառյալ:
2. Աշխեն Մինասյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Քարակերտի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Քարակերտի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լարիսա Մուրադյանին:

3. «Քարակերտի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լարիսա Մուրադյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 15-ից օգոստոսի 4-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Աշխեն Մինասյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 5-ից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ԿԱՌՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**